ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2025թ. **N---Ա**

ՈՐՈՇՈՒՄ
ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 594-րդ և 597-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի «Երևանտրանս» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) տնօրենի առաջարկությունը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Որպես նվիրատվություն ընդունել Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող գույքը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
____._____.2025թ.
հ. _____-Ա որոշման

ՑԱՆԿ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ

դրամ

Հ/հ	Գույքային համար	Անվանում	Թողարկման տարեթիվ	Պետ. համարանիշը	Գույքի սկզբնական արժեքը	Գույքի հաշվեկշռային արժեք
1	00000385	Ավտոմեքենա LADA NIVA LEGEND	2023	474 CU 61	4,500,000.0	3,231,250.0
2	00000386	Ավտոմեքենա LADA NIVA LEGEND	2023	475 CU 61	4,500,000.0	3,231,250.0
3	00000387	Ավտոմեքենա LADA NIVA LEGEND	2023	476 CU 61	4,500,000.0	3,231,250.0
4	00000389	Ավտոմեքենա Լադա 21214-000-21	2023	368 CX 61	4,500,000.0	3,408,266.1
5	00000390	Ավտոմեքենա Լադա 21214-000-21	2023	369 CX 61	4,500,000.0	3,408,266.1
6	00000391	Ավտոմեքենա Լադա 21214-000-21	2023	370 CX 61	4,500,000.0	3,408,266.1
7	00000392	Ավտոմեքենա LADA NIVA LEGEND	2022	672 CZ 61	4,333,333.3	3,427,643.3
8	00000437	Ավտոմեքենա ԼԱԴԱ մակնիշի ՎԱԶ 212140	2024	688 DE 61	4,640,000.0	3,975,806.5
9	00000393	Ավտոմեքենա LADA NIVA LEGEND	2022	673 CZ 61	4,333,333.3	3,427,643.3
10	00000438	Ավտոմեքենա ԼԱԴԱ մակնիշի ՎԱԶ 212140	2024	692 DE 61	4,640,000.0	3,975,806.5
11	00000439	Ավտոմեքենա ԼԱԴԱ մակնիշի ՎԱԶ 212140	2024	689 DE 61	4,640,000.0	3,975,806.5
12	00000440	Ավտոմեքենա ԼԱԴԱ մակնիշի ՎԱԶ 212140	2024	690 DE 61	4,640,000.0	3,975,806.5
13	00000441	Ավտոմեքենա ԼԱԴԱ մակնիշի ՎԱԶ 212140	2024	691 DE 61	4,640,000.0	3,975,806.5
14	00000442	Ավտոմեքենա ԼԱԴԱ մակնիշի ՎԱԶ 212140	2024	724 DE 61	4,640,000.0	3,975,806.5
ԸՆԴԱՄԵՆԸ՝					**63,506,666.7**	**50,628,674.0**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին» Երևանի քաղաքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով.

Նախագծի հավելվածով նշված, «Երևանտրանս» ՓԲԸ-ի հաշվեկշռում հաշվառված թվով 14 տրանսպորտային միջոցները Երևանի քաղաքապետարանի և «Երևանտրանս» ՓԲԸ-ի միջև 10.12.2024թ. կնքված հ. «ԵՔ-ԳՀԾՁԲ-25/6» պայմանագրով վարձակալությամբ հանձնվել են Երևան համայնքին՝ վերջինիս կարիքների ապահովման համար: Նշված տրանսպորտային միջոցները չեն օգտագործվում Ընկերության կարիքների սպասարկման համար, այլ կազմում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմին սպասարկող ավտոմեքենաների մի մասը:

Վերոնշյալ հանգամանքով պայմանավորված՝ «Երևանտրանս» ՓԲԸ-ի տնօրենը՝ 09.10.2025թ. գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետին՝ առաջարկելով նվիրատվությամբ Երևան համայնքին հանձնել վերը նշված տրանսպորտային միջոցները՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմին սպասարկող բոլոր ավտոմեքենաների ընդհանուր սպասարկումը միասնական մոտեցմամբ իրականացնելու նպատակով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Նախագծով առաջարկվում է որպես նվիրատվությամբ ստացվող գույք՝ Երևան համայնքի հաշվեկշիռ ընդունել Նախագծին կից հավելվածում ներառված թվով 14 տրանսպորտային միջոցները:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում Նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ